

ԽԱՅԱԿԱՆ

ԳԱԻԱՌԱՑԻՆԵՐՈՒ
ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍԸ

Ա. ՏԱՐԻ

30 ՅՈՒՆԻՈՒԱՐ 1912

ԹԻԻ 8

Խմբագրուեալ
Մ. ԻՓԷՔՃԵԱՆ

Արտոնագր
Հ. ԹԱՊԻՊԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքացիական աւագ պարտականութիւնը (խմբ.)

Պաղիկին (բանաս.)

Ո՛վ է ճշմարիտ որքը

Մանկութենէն վերջ (բանաս.)

Արեւոյսի ձայներ (բանաս.)

Աւստրիի յեղ. մեծ ջարձողները

Երաժշտութիւն

Միջապօյի հանրապարտութիւնը (քրդ.)

Գաղափարային Լուսնը

Գ. ԱԹԷՃԵԱՆ

ԱՐՄԷՆ ՄԱՆԿՈՒՆԻ

Յ. ՄԵՂՍՈՒՅԷԼԻ

ՆՐՍԷՆ-ԵՐԿԱԺ

Մ. ՎԵՍՊԵՐ

ԹԱԳԻՈՍ ԺԱՄԿՈԶԵԱՆ

ԶԵՄԻՆ

Գ. ԷՍՄԵՐԵԱՆ

ԱՄԱՍԻԱ

Տպագր. ՅՈՎՆԱՆԻԱՆ ԷՆ ԵԱՐՏԸՄԵԱՆ

«ԱՄԱՍԻԱ»-Ի ՀԱՍՑԷՆ

آماسیه ده «آماسیه» غزنه سی مدیریتہ

Խմբագրության «ԱՄԱՍԻԱ» Կիսաասիայի հանդեսի - Ամասիա
Rédaction de la Revue «AMASSIA», a Amassia (Turquie d'Asie)

ԱՄԱՍԻԱ

Քը հրատարակուի ամէն ամսու 1ին եւ 15ին, բուրբերէն եւ հայերէն
բաժիններով: Թուրքերէն բաժինը մօտաւորապէս 4 էջ, իսկ հայերէնը 12
էջ. երկու բաժինը միասին միշտ 16 էջ պիտի ըլլայ: Բաժանորդներուն
սարեկան 24 թիւ պիտի տրուի:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Թուրքիոյ սարեկան	1 մեհիս	Արսասահման սարեկան	5 փր.
» վեցամսեայ	0.50 »	» վեցամսեայ	2.50 »

Բաժնեզինը բացարձակապէս կանխիկ է: Ծանուցումներու համար ա-
ռանձին նպաստաւոր պայմաններ կը տրուին:

Տասը օրինակ «Ամասիա» սպառողին մէկ օրինակ նուէր:

ԱՄԱՍԻԱՅԻ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Թերթիս տեղական ցրուիչն ու հաւաքիչն է Պր. Յովսէփ Բալուեան, որուն մեր տեղա-
ան բաժանորդները իրենց բաժնեզինները վճարելով պարտին ստացագիր պահանջել:

ՏՈՐԵԼԵԱՆԻ ԾԱՆՈՒՅՈՒՄ

Տէր,

Ներկայիւս պատիւ ունիմ ծանուցանել Ձեր ազնուութեան որ առա-
ջիկայ 1912 Ապրիլ 1 կիրակի ցերեկ Բերայի վարիէթէ թատրոնին մէջ
պիտի կատարուի վաղեմի տաղանդաւոր դերասանապետ Մ. Մնակեանի
յիննամեայ յորելեանը, որ առաջին անգամ տեղի կ'ունենայ հայ դերասանի
մը համար:

Վստահ ենք թէ ձեր ազնուութիւնը պիտի փափաքի մասնակցիլ
հայ արուեստին փառաւորումը ըլլալու կոչուած այս հանգէտին և իր հոսկ
քաջալերանքը չպիտի զլանայ ծերունադարդ Յորելեարին որ հայկական բե-
մին անդրանիկ դերասանը և անոր ամենէն անադարտ փայլերէն մին եղած
է:

Ի դիմաց կարգադիր յանձնախմբի

Ներսէս Օհանեան

Յ. Պ. — Նամակ, հեռագիր, և ուրիշ առաքում պէտք է ուղղել հետև-
եալ հասցէին.

NERSES OHANIAN

Union de Paris

Constantinople

ԽԱՐԱԿԱՆ

ԳԱԻԱՌԱՑԻՆԵՐՈՒ ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍՐ

Ա. ՏԱՐԻ

30 ՅՈՒՆՈՒԱՐ 1912

ԹԻԻ 8

Խմբագրական

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱԻԱԳ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Շարաթներէ ի՛ վեր բոլոր շրջանակներու միտքերը գրազեցնող հարցը՝ երեսփոխանական ժողովի լուծումը և յետոյ անոր վերընտրութիւնն է։

Դեռ ժողովը չի լուծուած, երբ 35րդ յօդուածի խնդիրը կը յազուէր երեսփոխանական ժողովի երկու կուսակցութիւններու և Սայիտ փաշայի դահլիճին միջև, իր ամենասար հանգումանքներովը, այն ատեն դէպի սահմանադրական կարգերու գոյութիւնը յուշատեսներու ու լուսատեսներու շրջանակներ սկսան կազմուիլ ինքնաբերաբար։ Առաջինները նախորդ՝ օսմ. սահմանադրական պատմութիւնը մոտաբերելով՝ բռնապետութեան վերհաստատումը կը ճանչնային, 35րդ յօդուածի խնդիրը՝ իսկ երկրորդ դասակարգը — լուսատեսները — տիրազ կուսակցութեան սահմանադրաւէր ոգին վեր առնելով՝ բոլորովին հեռի ու հակառակ էր յուշատեսներու սրամաքաւ հաւթեան և ապապան փայլուն կ'ուզէր ցոյց տալ։

Աւրախ ենք ըսելու թէ երեսփոխանները կուգան մեզի ըսելու թէ յուշատեսները սխալ են իրենց խորհեալիւնքներէն մէջ։ Սակայն հարց կը ծագի թէ ուրեմն ինչո՞ւ 35րդ յօդուածի խնդիրը հրապարակ հանուելով — բոլուն ջանք թափուեցաւ ժողովին լուծմանը, քանի որ լուծողներու նպատակը կրկին ժողովին գումարումն էր։ — Պատասխանը շատ պարզ է, մեծամասնութեան, այսինքն իթթիհատի կուսակցութիւնը, երբ տեսաւ իրեն

դէմ կազմակերպուած ընդդիմադիր՝ — Իթիլաֆական — կուսակցութիւնը կը զօրանայ և իրեն շահերուն վտանգ կ'ըսպառնայ. ահա, թէ այս լուրջ վտանգին առջև աւելլու և թէ Իթիլաֆականները դեռ երկրին բոլոր կողմերը չի տարածուած, գալ շրջանին իր պատգամաւորներու թիւը կրկին մեծամասնութիւն կազմել տալու համար, ամէն ջանք թափեց ժողովը լուծելով անմիջական ընտրութիւններու ձեռնարկելու, որ ընդդիմադիրները միջոց ու ժամանակ չունենան իրենց ազդեցութիւններու շրջանակները ընդարձակելու:

Մենք լուծուած պատգամաւորական ժողովի անգործունէութիւնն ու ունէ շինարար գործի անընդունակութիւնը ընդունելով հանդերձ, մեծամասնութեան կուսակցութեան այս քայլը հակաժողովրդական ու լոկ կուսակցական նկատելով դատապարտելի կը գտնենք: Եթէ իսկական հայրենասէրներ էին, փոխանակ կռիւներով ու անհատականութիւնով զբաղելու, փոխադարձ զիջումներով շինարար աշխատանքի պէտք է ձեռնարկէին. բայց աւագ որ մենք խօսքով հայրենասէրներ ու ժողովրդասէրներ ենք, ո՛չ գործով:

Ինչ որ ալ ըլլայ մեր կարծիքը այս մասին, այլևս ասոնք կատարուած իրողութիւններ են: Եւ հիմայ նախորդի դառն փորձառութիւններէն օգտուած իւրաքանչիւր քաղաքացի նուիրական ու աւագ պարտականութեան մը կատարման հարկին առջև կը գտնուի:

Այդ պարտականութեան կատարումը գիտակցական հողի վրայ դնելով համար, քաղաքական կուսակցութիւններն ամէնէն աւելի, իբր քաղաքական գործ ու իրենց ծրագրին իրագործման հիմը՝ որոշ ու պատասխանատու դեր ունին: Անոնք կուսակցամոլական ամէն հաշիւ թողած՝ համերաշխ գործակցութեամբ մը՝ ժողովրդեան իրաւազուրկ դատաւարդին շահերն ուսերնին՝ պէտք է իւրաքանչիւր քաղաքացիի մէջ դէպի այդ նուիրական պարտականութիւնը, գիտակցութիւն ու պարտաճանաչութիւն արժարժեն:

Նուիրական ու աւագ պարտականութիւնը ներկայ Օսմ. Բարլամէնթին համար, իւրաքանչիւր գաւառի Պատգամաւորի ընտրութիւնն է:

Պատգամաւորական ժողովը՝ թէև նախորդ շրջանը վերջիշած ատեննիս րիչ մը կը փորձուինք տատամներ, սակայն կրկին կ'ըսենք թէ երկրի մը ոնտեսական, Պետական ու ընկերային յառաջացման միակ շարժիչ ոյժն ու ազդակն է: Առանց անոր ունէ դատակարգ իր շահերը չի կրնար օրինական ու տրամաբանական ճամբով հետապնդել, վերջապէս առանց այդ ժողովրդապիտ ներկայացուցչութեան, բռնապետութեան տիրապետութիւնը կ'ըլլայ: Ահա այսքան նուիրականութեան հանգէպ գիտակցութիւն և պարտաճանաչութիւն պէտք է:

Պարտաճանաչութիւն՝ միւսքէիսկի տակնէն ընտրութեան պարագաւ:

յին: Առանց աղայական ու պէշական ազդեցութիւններէն ու հնամենի սովորութիւններէն ազդուելու կեդրոնացնելու ենք մեր քուէները այն պէտքերու վրայ, որոնք բարեխղճութիւնն ու քաջութիւնն ունենան յետոյ, ըլլալիք սպասնալիքներուն կուրծք տալով՝ մեր շահերուն պաշապան՝ կարողագոյն անձերուն աալու իրենց քուէները: Հերիք որքան շահագործեցին տառապող դասակարգին քուէները իշահ իրենց, հերիք որ մենք ալ ոչ խտրութեն ատրուեցանք ամէն հոտանքէ:

Թաւրք հայրենակիցներուն կը թելադրենք սր իբր անկեղծ հայրենասէրներ, անցեալին փորձառութենէն օգտուելով, ազդայնական ու կրօնական մայեւանդութենէն մերկացած մօտենան ինդիքին շուրջ, որովհետեւ ազգի, կրօնի և դաւանանքի ընտրութիւն չպիտի ընենք, այլ ուղղակի, բառին բուն նշանակութեամբը, ՄԱՐԳՈՒ, որ զիտնայ ծառայել իր հայրենիքին, և հմուտ ըլլայ, պատգամաւորէ մը պահանջուած պայմաններուն: Այժմէ երթայ բազմի այնտեղակ փաթթոցաւոր մը, որ անձրեւներու չգոյութեան համար խալիֆայական միջամտութիւնը անհրաժեշտ նկատէ:

Ձի մոռնանք ըսել թէ քեկնածութեան մարմնացէն վարակուածներու շրջանակ մըն ալ ստեղծուած է ամէն գաւառի մէջ, ամէն օր նորանոր նամակներ կ'առնենք իրենց թեկնածութիւնը «Անասիա»ի միջոցաւ պաշապանելու: Ասիկայ ալատերում, դէպի հայրենիքը դաւաճանութիւն կը նշանակէ: Մարդեր կան, որոնք իրենց շահերը չեն կրնար պաշտպանել, կ'ուզեն հայրենիքի շահերուն նուիրուիլ: Ի՞նչ, միթէ պատգամաւորութիւնն այսքան կորսնցուցած է իր կարեւորութիւնը: Այ, ո՛չ, պէտք է ամէն մարդ իր ոյժն ու կարողութիւնը չափէ և ըստ այնմ իր թեկնածութիւնը առաջարկէ, եթէ իբր քաղաքացի ունի իր մարդ ըլլալու գիտակցութիւնը:

Այսքան թեկնածուներու առատութեան մէջ յարմարագոյնը ընտրելը ժողովրդային գիտակցութեան կը կարօտի: Օ՛ն ուրեմն, գիտակցութիւն, համագործակցութիւն ու գործունէութիւն դէպի աւագ պարտականութեան կատարումը . . . :

Գ. ԱԹԷՇԵԱՆ

ԾԱՆԻԿԻՆ

Ծաղիկ, Արուշին խորհուրդէն ես բարձր խորհուրդ մը քաղեալով կը տեսնեմ քու մէջ, Այն է՝ որ դու ալ ունիս դառն եւ քաղցր Կեանքի յոյժն ու յոյս քու մէջը անեղ . . . :

Ըսէ ալ ինձի, քու կիսն եւ իմին
Մէջ տարբերութիւն կայ յար եւ նման,
Քանի որ դու ալ ես ալ միասին
Կ'ապրինք աշխարհի զոգը հանգրուան:

Կայ այո՛, այն է ես կզգամ ցաւ, միտ
Այն բանէն, որմէ դու ես զուրկ այսօր,
Ըսէ՛ ինձ մարդիկ դժբախտ են քե միտ
Մեջանիկ, որով կ'ապրին կեանք մ'հզօր .

Ծաղիկ այս բանը ես քեզ կը քողում . . . :

Ամասիա

ԱՐԲԷՆ ՄԱՆԿՈՒՆԻ

Ո՛Վ Է ՃՇՄԱՐԻՏ ՈՐԻՉ

Ճակատագրային սուղայտանքի ամենէն աւելի աղետարէշ պատկերացումն է որբի կենցաղը: Անտիական հասակին մէջ ծրնողական նախախնամութեան մը ծոցէն խլուելով մարդկային սովորական դառնութեանց մէջ անխնայ նետուած զոհն է ընտանեզուրկ մանուկը: Անոր դեռափրթիթ կեանքին սահմանուած զուարթ ժամերը արցունքով կ'անցնին, և իր ճակտին վրայ մայրական չքնաղ համբոյրներէն աւելի բախտի անակնկալ ապաստաններ կը գրոշմուին: Այլևս փողոցին անտէրոնչ թափառաշրջիկն է այն, որուն տեսքը ոմանց անտարբերութիւնը և ումանց ալ հեզնաժպիտը կը հրաւիրէ իր վրայ: Իր բունէն իսպառ խլուած ազազուն տերեւն է, որուն կեանքը ուրիշ բան չէ, եթէ ոչ ենթական բնութեան չորս հովերուն, որոնք անակնկալ վերելքներ և անսպասելի անկումներ միայն կ'ապահովեն: Իր արցունքները չին դաժքիւր այտերուն վրայ: Վրան կարեկցող ո՛չ մէկն ունի: Անթուրթիւնը, գուլպայազուրկ, փափուկ ու անկօշիկ ոտքերը, անօրինակ դժբախտութեանց և փորձութեանց նշմաւակ եղող կեանքը ինչ փոյթ ուրիշներուն համար: Իր ճակատագրի ճարտարապետը ինք պարտի ըլլալ: Մօտէն անցնող շատ մը ուրախ ու զուարթ մանուկներ՝ արհամարհոտ նայուածք մը անգամ չէին ուզեր նետել իրենց այս տարեկիցին վրայ: Անոր պահանջն է պատառ մը չոր հաց և ո՛չ ուրիշ բան: Շատեր անոր ներկայութիւնը իրենց տան մէջ՝ սրբապղծութիւն մը կը նկատեն, ոմանք կը վռնտեն ու ոմանք ալ անտարբեր կը մնան: Վա՛յ այսպիսի օրերուն, որոնց կեանքը երգ ու պարի կենցաղը ըլլալէ աւելի՛ լաց ու կոծի միացումն է: Ան թեւաբեկ թիթեռնիկն է:

Անողորմ բախտը ինչ չուտ փորձառու

րերն է պինքը արտասուքի և փորձանքի կենցաղին: Իր նմաններուն պէս գերերջանիկ կեանք մը ապրելու սահմանուած այն անմեղ մանկան վրայ չեմ գիտեր ո՛վ թափեր է նախանձի ու վրիժառու իրեն ժանտ թոյնը: Կեանքի անհամար վայելքները իրեն համար ոչինչ ունին միայն թարական: Ան չի խորհրդ թէ անյոյս տառապող մը ըլլալու դատապարտուածը սոսկ ինքն է, թէ ոչ ուրիշներ այ կան: Եթէ որոշ գիտակցութեան մը եկած ըլլար իր շուրջի իրադարձութիւններուն, այն ատեն պիտի նախընտրէր միայն վայրկենական ստոյգ մահը և ոչ թէ այս սօրինակ դատաքուրթիւնը: Ընկերային կեանքի մոլորեալ ոչխարն է պա՛ղտապէս, և իր կեանքի հեղինակները ի վաղուց վերցուեր են: Ան որք թաշտեն է, ուրուն բոյնը չեմ գիտեր ո՛ր բազուկը քանդեր է:

Ճշմարիտ որբը, սակայն, այս է գրգռախառնար: Ճշմարիտ որբը այն է որ զրկուած է ուսման ու գիտութեան կենսաբաշխ լոյսէն: Նա խուարի գերին ու մթութեան անտառին մէջ կորսուած ու ղեւորն է պարզապէս: Իսկական որբը այն է որ բռնավար կը քշուի բնութեան անակնկալ չորս հովերէն: Խեղճ որբուկ: Ան իր կոշումին անգիտակ՝ յաւիտենական թափառողն է՝ չունենալով ո՛չ սկզբունք ո՛չ մտատիպար: Իմացական, բարոյական ու հոգեկան չէնչող լոյսէն զրկուածն է այն: Դիտակցութեան բովարտէն չէ անցեր իր բովանդակ կեանքը ու չէ եղեր տեղեակ շուրջի բոլոր իրերայայտութեանց: Նկարագրի ու անհատական կորովի որոշ հիմ մը կը պակսի իր մտքին ու սրտին մէջ, և կը դառնայ ստրուկ կոմակատաբը մեծ ու պզտիկ՝ նրամայողներ:

Եղովկ այն որբերուն, որոնք անմեղա, տես ու անգիտակ կեանքը վարագուր-

ուած սենեակ մըն է արեւուն կենսունակ
ճառագայթներուն առջեւ: Անոնք անըզ-
գաներ են և ապրելու իրաւունքէն խա-
ղառ զրկուելու դատապարտութենէր:
Անոնք մարդկութեան հանդէպ իրենց
ունեցած ոչ մէկ պարտականութենէն գի-
տակ են, քանի որ չունին լոյսի պահանջ,
բոյսի հեռապնդում: Անոնց աչքերը փակ-
ուած են և զանազանելու անկարող մեծն
ու պզտիկը, լոյսն ու խաւարը, բարին

ու չարը, ճշմարիտն ու կեղծիքը: Կոյ-
րերը միայն անոնք չեն, որ չեն տեսներ և
ոչ մէկ բան, այլ անոնք, որոնք կը տես-
նեն, կը լսեն և սակայն չեն կրնար հաս-
կրնալ, չեն կրնար զանազանել: Հազար
անգամ վաճ լուսազուրկ այն որբերուն,
որոնց կենցաղը ուրիշ բան մը չէ, բայց
եթէ աւելորդ բեռ մը մարդկութեան կոչ-
ուած մեծ ընտանիքն վրայ ծանրացած:

Մարգուան

Զ. ՍԵՂՍՈՒՆԻ

ՄԱՆԿՈՒԹԻՒՆԻՆ ՎԵՐՋ

Իմ մանկութիւնքս ելաւ՝ ու զընաց
ինչպէս գարունը իր ծաղիկներով,
(Տ, վառ խոտերս ալ կարծես որբացած՝
Ն՝դ զըսան հոգիս իր ցանցանքներով:)

Եւ այն հին կեանքին՝ որ սնմեղուքեան
եւ ջինջ համբոյրի ժրպիտը ունէր,
Պարզ յիշատակներ մընացին միայն:
Եւ ես սովորեցայ երազել, Ոգել՝...

Երգել այն կեանքը մանուկ, ծաղկավաճ
Ժրպետը աստղերու եւ արեւի ակ,
Այն ասէն երբոր ցանցանք չի կա՛ր.
Եւ հոգիս կը զգար հրեւոյնէն միակ:

Բայց, հաւասացե՛ք, բընաւ չի լացի
Երբ մանկութիւնքս ելաւ՝ ու զընաց,
Սա ինչպէս երեկ, այսօր երգեցի
Կրօնը՝ զոր այս նոր կեանքն բերած:

ԴԱՀԻՐԻ

ԱՐՍԷՆ - ԵՐԿԱԹ

ԱՐՇԱԼՈՅՍԻ ԶԱՅՆԵՐ

Յոյներ կուգան

Յոյներ կուգան վարդանման լեռներէն,
Արշալոյսի նոր ուխտերը սփռելու.
Կարաւան մինչ կը փրփր բոյրերու,
Ըսպասումի նոր կառքին հետ հեղեկն...:

Ըսպասումի ցոյքեր կուգան վե՛ւվեռն,
Որոնց հրայրէն կ'ուզեմ լուսնի պահ
մ'առաջ,
Ու խորանին խորհրդազեղ վեհութիւն:

Ոսկեփրփուր ծով մէ հիմայ սարալանջ,
Յոյներ զուարթ անհուն ցանաւ կողովէն՝
Յնծումներու, նոր եղեմի ձայներով.
Բուրումնաւէտ օրհներգներով լի՝ ե հոյ:

Յոյներ փրքած հրդեհանման սփերէն...
Աւեսաւոր խորհուրդներով ցնծալի.
Քուրմի երազս պայծառին մէջ կը հալի
Ու պարիկներ պարապին ծոց կը պարեն...:

Վան

Մ. ՎԵՍՊԵՐ

Պատմական

Ա.Շխարհի Յեղափոխական Մեծ Շարժումները

Բ.

ԿՐՈՆԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

ԿԱՄ

ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ԴԱՐ (Reformation)

«Ինչ որ կ'ուզեք որ ուրիշներ ձեզի ընեն,
յուր ալ անոնց անանկ ըրեք:» ՅԻՍՈՒՍ

«Խղճիդ դեմ գործելը ոչ ուղիղ է եւ ոչ ալ
արդար:» ԼՈՒԿԱՍ

Այսօր եւրոպացի հեղինակաւոր պատմադէտներ կ'ընդունին և կը հաւատան թէ կրօնական այս մեծ յեղափոխութեան նախնական սերմերը իրենց ծագումն ըստացած են Հայաստանի մէջ, ուր Թ. և Ժ. դարերուն կրօնական նորագոյն ազանդաւորներ իբր հերետիկոս՝ հպարտութեամբ զէպո Պուլկարիա, հոսանքը անկէ ալ արշաւած է դէպի արեւմուտք, և այդպէս հեղինակ յառաջ եկած են Այբեկեաններ, Ուրբլիֆեաններ և Հուսեաններ, որոնք ի վերջոյ ճշմարիտ նախակարապետները հանդիսացան այն մեծ շարժումին, որ իսկապէս կոչուած էր յեղաշրջելու մարդկային հոգեկան աշխարհը ալեծով: Ահա Հայոց պատմական դերը եւրոպական այդ հակա շարժումին մէջ, ահա անոնց մատուցած անդին ծառայութիւնը ընդհանուր քաղաքակրթութեան սեղանին առջև:

Բայց թէ ինչո՞ւ կրօնական այդօրինակ մեծ պայթում մը չի յառաջացաւ Հայաստանի մէջ, պատասխանը շատ դիւրին է. որովհետեւ Հայաստանի եկեղեցին՝ թաղութին և Լուսաւորիչի հիմնած ուղղային ազգային եկեղեցին էր, մինչդեռ եւրոպայի մէջ՝ եկեղեցին ո՛չ միայն ազատ ու ազգային չէր, այլ ընդհակառակը քաղաքա-

կան ու կրօնական բարձրագոյն իշխանութիւններով լիազօրուած, և բանադրական ու հաւատաքննական դժոխային զէնքերով զրահաւորուած՝ բռնակալ եկեղեցի մըն էր. ուրեմն հոն պայթումը շատ բնական ու անխուսափելի էր:

Յեղափոխութեան անշէջ կրակը հրահրող ուղղակի ազդակները չորս էին. — 1. Վերածնութիւն, 2. Բարոյական ինկածութիւն, 3. Պապական ախրապետութիւն, և 4. Ներողագրութիւն (Indulgences) վաճառականութիւն:

1. Արդէն ցոյց տուինք Իմացական յեղափոխութեան դերը բարեկարգութեան մէջ. բսինք թէ ապագրութեան փառաւոր գիւտով նախ հրատարակուեցան Ս. Գրքէօրինակներ, ժողովուրդին սորվեցնելով անոնց պարզ ու ճշմարիտ ոգին. բայց հոս պէտք է նաեւ գիտնալ թէ Հինն ու Նորին, քառական վարդապետութիւններու ջիւղ պաշտպաններուն ու վերածնունդի վառվառն սիրահարներուն միջև պայքարը անխուսափելի էր, որ եկած էր զօրեղապէս հարթել կրօնական յեղափոխութեան այն փշալից ճամբան որ արդէն նով բացուած՝ արիւնով ալ պիտի վերջանար:

2. Երկրորդ պատճառը՝ բուն իսկ եկե-

ղեղին մէջն էր։ Արդէն ըսինք թէ Գըրիստանէական եկեղեցին բոլորովին կորսնցած էր իր առաքելական նախկին պարզութիւնը։ արարողութիւններէն ու վարդապետութիւններէն չափեր հիմնովին անհամաձայն էին Ս․ Գրոց սգին, և Քիլիսոսիք քարոզած գործնական սկզբունքներուն։ Ասանց վրայ կուգար աւելնալ եկեղեցւոյ պաշտօնականներուն վարած զեղխ ու անբարոյացած կեանքը, որ մեծապէս գալթակղեցնելով ժողովուրդը իր միամտութեան ու իր կոյս հաւատքին մէջ, պատճառ եղած էր անոր ուժաղուժին ու գարշանքին թէ՛ կղերականներէն և թէ՛ այն եկեղեցիէն, որ հոգւով չափ կ'ուզէր պաշտել։ Ի տես այս ուղբալի կացութեան, եկեղեցիին սրտցաւ բարեկամները, որոնք իր մէջէն ծնունդ տունոյ հեղինակաւոր ու եռանդուն կղերայաններ էին, որոնք իսկ «ոտքէն գլուխը» դարձան ու բարեկարգութիւն կ'աւաղակէին անվերապա անկումէ մը փրկելու համար զայն։ Բայց ի՞նչ եղանակով պէտք էր յառաջ տանիլ բարենորոգումի այդ շինարար գործը։ Եւ հոս էր անհամաձայնութեան կէտը, — Ներսէս սկսիլ թէ դուրսէն։ Խաղաղ բարեկարգութեամբ թէ յեղափոխութեամբ։ Եւ հոս էր էական հարցը, որ լուծուեցաւ վերջապէս յեղափոխութեամբ միայն։ Եւ ի՞նչ պէտք կարելի էր խաղաղ միջոցով լուծել այդ, քանի որ վերջը անհրաժեշտ խորունկ էր, և դարձանք զգուշարին։

3. Պատմական այս մեծ հերձուածին (schism) երրորդ պատճառը եղաւ պապական աթոռին անհանդուրժելի տիրապետութիւնը։ Պապերը՝ Բրիտանի հեզ ու խոնարհ յաջորդները? Եւ Աստուծոյ անսխալ փոխանորդները? Իրենց իշխանական գահերը զետեղած էին հոյակապ պալատ-

ներու և անմատչելի արքունիքներու մէջ, իրենց շուրջը կեդրոնացնելով աշխարհային ամեն վայելք, և նիւթական ամեն ուժ, որոնք հարկաւոր էին միմիայն ժողովուրդային գիտակցութիւնը խեղդել, և իրենց աստուածատուր իշխանութիւնը յաւերժացնելու համար։ Եւ կարծես կրօնական այս վիթխարի զօրութիւնը չէր բաւեր այդ անկուշտ պապերուն, անոնք՝ շնորհիւ իրենց ստացած կրօնական արտառց առանձնաշնորհումներուն, կը ջանային քաղաքական իշխանութիւններն ալ միացնել կրօնականին, թագաւորներ ու կայսերազուն իշխաններն իսկ իրենց երկրպագուները դարձնելով։ Ի՞նչ պատճառներով սկսան արդեօք քահանայապետական կոիւնքը պապերու և Գերմանական կամ Ֆրանսական կայսրերու միջև, և անդհադադ քախուժներով՝ տեղեցին ԺԱ դարէն մինչև ԺԶ դարը։ Եւրոպական ժողովուրդներ անկախ ըլլալէ չափ հիռուէին։ Ի՞նչ Հռովմի տեղ, այժմ կրօնական Հռովմի եկած էր տիրել անոնց վրայ իր անսահման աշխարհամատալ իշխանութեամբ։ Բայց կարելի՞ է չյիշել նաև իր երկւորեակ զէնքերը անազորոյն, — բանաբանք և հաւատաքնական ատեան։ Բանաւանդ սա գարշաբոյր ատեանը, որոնք այնքան թանկագին կեանքեր խլեցին հէզ մարդկութեան ծոցէն... Գիտակցական ամեն ըմբոս շարժում խեղդելու համար, պապերը անխտիր կը գործածէին իրենց այդ երկու բնական զէնքերը ճիշդ անպէտք, ինչպէս համիտական բռնապետներ բանտ, աքսոր ու կախաղան մը այն կ'ապառնային յեղափոխական ամեն տեսակ երեւոյթներու։ «Խաչի տեղ սուր և օրհնութեան տեղ նզովք»։ Եւ պապերու ամբողջ գործելակերպը։

Շարունակելի

Թ. ԺԱՄԱՌԱՅԱՆ

ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Պատմութեան էջերուն մէջ կը հանդիպինք շատ մը նշանաւոր երաժիշտներու սրունք իրենց գործերովը անմահ են ու պիտի ըլլան յաւէտ: Այսպիսիներու արժէքը չ'սրտէ գնահատելով երախտապարտ կը մնանք իրենց, սակայն այն ատենը ցաւ ի սիրտ կը դիտենք թէ իրապէս մեծ կոչուած երաժիշտներու ցանկին մէջ հայի մը չենք հանդիպիր երբեք: Ի՞նչ է արդեօք ասոր պատճառը: Արարիչը՝ մեզ հայ ազգս, այս շնորհալի ձիրքով օժտելէ թերացած է արդեօք: Հայը՝ եթէ արգարացնէ ինքզինքը խորհելով թէ այս գեղարուեստը մշակելու միջոցները կը պակսին իր մէջ, կրնայ արդեօք նոյնպէս արդարանալ յսելով թէ այս ձիրքն ու ընդունակութիւնն ալ իր մէջ գոյութիւն չունի:

Այս կէտը թէ՛ Հայը իբրեւ ազգ, երաժշտութեան որքան ընդունակութիւն ունի, ուշադրութեամբ ու խորհուրդիս աւարկան եղած է, սակայն որոշ եղրակացութեան մը յանգելու կարող եղած չեմ, քանզի անյեպարհ մէջ մշակութեան միջոցները իրապէս շատ աննպաստ եւ անյոյժ եղած են: Այս պարագան սակայն կրնայ որոշ ապացոյց մը ըլլալ թէ մեր ազգին մէջն ալ ունի գեղարուեստին բնդունակութիւն ունեցողներ կան: Շիտակ է թէ Պախի, Պէթովէնի, Վալէնէրի, Շոփէնի նման Հայ մեծ երաժիշտներու երբեք չենք հանդիպիր, սակայն եթէ անոնց այդ ճիւղին հետեւիլ սկսած տարիքնրն, ատոր տրամադրած ժամանակինն եւ միջոցներու անպատասխանը նկատի առնելով բազդատենք վերոյիշեալներուն հետ, չէ թէ միայն մերկներուն թերի մնացած կէտերուն ներողամտ աչքով պատի նայինք, այլ անոնց մէջ բնածին տաղանդի մը որոշ ապացոյցներն ալ պիտի կրնանք նշմարել: Ասով հանգերձ

պէտք է խոստովանինք թէ մենք, մանաւանդ գաւառացի հայերս երաժշտութեան իրական արժէքն ու նպատակը գնահատած ու հասկցած չենք երբեք: Ան մեզ համար լոկ արտեր կամ վրէժներնչեղ երգերու յանգիր կամ զուարճութեան պարզ ու թեթեւ մըջոց մը ըլլալէ ոչինչ աւելի է, եւ ան՝ այս է պատճառը որ այսքան անտարբեր կը վերաբերուինք անոր հանդէպ եւ երբեմն զուարճութիւններ անարժէք սեպելով պատճառ կ'ըլլանք մոռցնելու բնածին տաղանդները, որոնք մշակուելով հայ ազգութեան պատիւ բերող անձնաւորութիւններ եւ յառաջդիմութեան ազդակներ կ'ընային ըլլալ:

Ա՛ն, որուն համար երաժշտութիւնը զուարճութեան միջոց մը, պարի նրաւեր մը, կամ նոյն իսկ լոկ Հարուն անյեպարհ ու ներկայ տառապանքներուն յուշարարը ըլլալէ անդին չանցնիր, շատ միակողմանի դիտող մըն է, եւ պիտի համարձակի՞ր սեղ թէ կարեւոր պակաս մը կը կրէ, պակաս մը՝ որուն տեղ ոչինչ կարող է լեւորնել:

Երաժշտութիւնը կազմուածքնէ մեր բզգացումները, կը բարձրացնէ մեր հոգին, կը փարատէ կոպոյտ երկնակամարը աւատաւորող ամպերը, ան ընկերութիւնը եւ ընտանեկան յարկը չէ թէ միայն աւելի հաճելի ու զուարթ կ'ընէ այլ անոնց դրախտանման հանգամանք մը կ'ընծայէ եթէ միայն շխտակ կերպով արտայայտուի եւ ըմբռնուի: Չարժեք ուրեմն այսպէս գեղարուեստի մը կարեւորութիւնը բնդունելով աշխատել որ մեր մէջ աւելի ընդունակութիւն գտնէ եւ աս ճիւղը զարգացնելու պէտք եղած պայմանները ձեռք առնուին, հոգ չէ թէ երբեմն զուարճութիւններ հարկ ըլլան:

Ուրախառիթ պարագայ մըն է դիտել

թէ գաւառացիք մանուկին և իգական սեռին կրթութեան կարեւորութիւնը ըմբռնելով միջոցներու ձեռնարկած է, սակայն արդեօք քանիներ այդ ու բէնի հետ երաժշտութիւնն ալ մշակելու պէտքը զգացած են, չէ՞ որ այսպէս թելադրութիւն մը մեծամասնութեանս չէ թէ միայն երրորդական պէտք է ըլլալ կը թուի այլ նոյն իսկ ծիծաղաշարժ առաջարկ մը միայն:

Խօսք մը ևս կ'ուզեմ ուղղել ընկերուհիներու: Ինչո՞ւ մենք իգական սեռու մեր պարսպ կոչած ժամերը փոխանակ երևակայական զղեակներ չիներու կամ

անպետ և անարժէք խօսակցութիւններու յատկացնելու՝ չաշխատինք, գէթ կարելի եղածին չափ, մշակել մեր մէջ երաժշտութիւնը՝ որը կրթական, ընտանեկան և կրօնական յարկերը հաւասարապէս աւելի բարձր, հաճելի և փափաքելի ընելու հաւաստիքը կուտայ:

Կը փափաքէի մօտաւոր ապագայի մը մէջ տեսնել՝ ընդհանրապէս մեր երկրին՝ իսկ մասնաւորապէս Հայերուս երաժշտութեան մէջ աստիճանաւոր զարգացումը, որով քաղաքակրթութեամբ ազգի մը կարճոր պատկերէն մին ա լեղումս պիտի ըլլար:

ԶԵՓԻՒՌ

ՄԻՐԱՊՈՅԻ ՀԱՆՐԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ (democratie)

Մարդկային սնափառութիւնը երբէք չի կորսնցներ իր իրաւունքները: 4 Օգոստ. 1789ի գիշերին, (անմահ գիշեր, ուր ազնուական բոլոր առանձնաշնորհները և խնդիրները ջնջուեցան, ուր ամէն ինչ իշր ողջակէզ զոհուեցաւ նոյնիսկ ազնուականներու կողմէն) երիտասարդ հայրենասէր փաստաբան մը. 89ի ամենէն կատաղի ընտրողներէն մին, անհամբեր կ'սպասէր Միքապոյի որ ժողովէն (Assemblée) չէր վերադառնար: Ան եռանդուն տրիբունի դաշիճին մէջն էր, որ, ըստ իր սովորութեան, հրամայած էր պատրաստի լոգարան մը ունենալ վերադարձին հանգստանալու համար: Վերջապէս Միքապո կը հասնի, բողբոլին յուզուած, հայրենասիրական խանդէն բողբոլին այլ յայտէ եղած: «Ա՛հ, բարեկամս, կ'աղաղակէ, ի՛նչ գիշեր, ի՛նչ ժողով: Այլևս չը կան զեղծումներ, չ'կան խտրութիւններ, չ'կան առանձնաշնորհներ: Քաղաքներ, կառավարութիւններ, քաղաքացիներ, բոլորը հաւասար են, Ֆրանսայի ամենէն մեծ անունները, Մօնթ-Մօրէնսիները, Լա Բօշֆուքօլիները, ամէնքս,

հայրենիքի բազինին վրայ, մեր տնտեսները զոհուինք: Ի՛նչ անշահասիրութիւն, ի՛նչ օրինակ եւրոպայի համար որ կը աշխատէ ու կը ծափահարէ մեզ:

Համակ խօսք ու շարժում և դարձած, կը մտնէ իր լոգարանը, որ սառած էր, բուն կերպով յաճախակի զոհողոր կը հնչեցնէ, սենեկապանը ուշացուցուած էր վտանգի կառավարի պաշտօնատան մէջ անոր ալ պատմուած էր գիշերուան իրողութիւնը, ան կ'շտապէ և կ'ուզէ բնականաբար չքմեղանալ: «Կրնամ հաւաստել պարոնին թէ, կ'ըսէ, լոգարանը մի և նոյն աստիճանին մէջ կը գտնուի քան երէկ»: «Պարո՛ն, կը գոչէ Միքապօ, պարո՛ն, ի՛նչպէս կրնաս աս ըսել, ազնուա՛շ, առաջացիր քիչ մը:» Այն ատեն անոր տկանջէն կը բռնէ և իրեն դէմքը ջուրին մէջ մխրձելով՝ կ'ըսէ. «Ա՛հ, պարո՛ն, դա՛իճ, մի՛ մոռնար թէ քեզի համար միշտ պարոն կոմսն եմ:»

Ու տրիբունին հիացող երիտասարդը միմռալով ելաւ:

Թրգմ. Ծրան. Գ. ԷՍԿԵԼԵԱՆ (Ed. Laboulaye)

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՓԱՓԱՔԻ ԳՈՅԱՑՈՒՄ

Պր. Արսևուսէր Աւսախա Հանդեսի

Աւսախայի օրոյ թուոյն 30 դեկտեմբերի 96 օրոյ էջին մէջ կարդացին անուանակիչ դիտորդութիւն մը ևնորնէիւր քաղ. խորհրդոյ անդամոց եւ մասնատորապէս մեկուն մասին, զանոնք ներկայացնելով իբր խժժող կամ հայկոյոյ:

Արդ կ'ուզանք արահանել շահուն օրինի ու նոյն քերթի նոյն էջի մէջ կամ անունով վկանելով փաստէք թէ

4 Յունիս 1912

Աւսախա

Ներկայ գրութիւնը նոյնութեամբ ու առանց տառի մը փոփոխութեան հրատարակելով, թէ և զայն օրինական ճանչալու համար՝ նորընտիր թագ. խորհրդոյ մեծամասնութեան ստորագրութիւնը պէտք է կրեր իր վրայ, սակայն առանց այդ պարագան նկատի առնելու երեք ստորագրութիւններուն անհուն փափաքին գահացում առած ըլլալու անկեղծութենէն մղուած կը փութանք յայտնել թէ մեր նախորդ թիւով իբր խժժիչ և հայհոյիչ ակնարկելու զամբ ու խոհմութիւնը ունենար իր խանութին առջև դրածած լըպիրջ ու անվայել լեզուն յիշելով

ով է հայկոյոյ կամ նրբ երբէք սրխայ տեղեկութեանց վրայ հիմնուած գրած էք սոյն դիտորդութիւնը Աւսախայի առաջիկայ թուով ջրէք Ձեր սխալմունքի գոհ գացած ըլլալը, չը մոռնալով հրատարակելու նաեւ սոյն գրութիւնը, հակառակ պարագային ըստպարտած պիտի ըլլանք օրինական միջոցի դիմել:

ustak'ian*)

Մ. Չափեան

մերսիսեան

Ա. Ա. հաճի

գիտաբիւտան (*)

միամտօրէն վերի գրութիւնը չէր ստորագրեր: Եւ մանաւանդ եթէ խորհրդի թէ իր սովորական խօսքերը արդէն հայհոյութիւններէ կը բաղկանան, այդ կերպ գրութիւն մը ըստ ստորագրած ատեն ձեռքերը զողալով գրելը վար պիտի ձգէր, ու վաղ պիտի անցնէր զինք թեւադրողներու խորհուրդին հետեւելէն: Չարմանալի կը գտնենք նաեւ անոր ընկերացող երկու անձերու հոգեբանութիւնն, որ իրենց բարեկամին ու սրտածուկին էութիւնը առանց ճանչալու, կը համարձակին այդ կերպ գրութիւն մը գրի առնել: Արդեօք նոյառաւինին գիտումնաւոր ու մեթոտիկ կերպով վարկաբեկել էր Պր. Ստեփանը, որուն անունը տալէն զգուշացեր էինք մեր

(**) Իրենց անուններուն ու մականուններուն ուղղագրութեան անսեղեակ այս բաղական աղաները, իցիւր թէ իրենց ապագայ գործունէութիւնն ալ իրենց անուններուն ուղղագրութեան չի նմանցնէին: Ծ. Կ.

նախորդ թիւով, ըսի անձնականու-
թիւնով չզրադելու նպատակով:

Արդ, մենք մեր արդահատանքները
յայտնելով՝ կը հրաւիրենք որ իրենց
սպառնացած օրինական միջոցներ-

ումն աճապարեն դիմել:

Եթէ հարկը ստիպէ առաջիկային
այս կէտերու մասին ահտութիւններ
կ'ունենանք ընդարձակօրէն:

ԽՄԲ.

ԼՍԱՐԱՆՆԵՐ

Յնվր. 24ին կիրակի օրը տեղւոյս Ս.
Դ. Հնչակեան գլխւպին մէջ թերթիս խմ-
բագիրներէն Տիար Դ. Աթէշեան «Ակըզ-
բունքային» հարցեր և օրուան հրատապ
խնդիրներ» նիւթին վրայ 1.23 ժամ տե-
ւով բանախօսութեամբ մը բացատրեց թէ
«նչպէս եղած է Սօսիալ-Դեմօկրատիայի
կազմութիւնն, ինչ է անոր էութիւնը և
անոր բռնելիք դիրքը ինչ պիտի բլլայ
ներկայ Բարլամենի ընտրութեան պարա-
գային»:

Յետոյ մենախօսեց Տիար Յովսէփ Եար-
տըմ, Սեւանթթոյի մէկ գեղեցիկ կտորը,
«Կովկաս» կատարեալ յսնողութեամբ ու
բնականութեամբ: Դովելի է իր բնական
յատկութիւնը:

Դարձեալ նախորդ տմու 29ին կիրակի
օրը վերակազմեալ Հնչակեան Կուսակցու-
թեան կեդր. վարիչ Ժարմուշ անդամնե-
րէն Պրն. Հ. Սեւանթթոյ, որ ինքզինքը
Սերատարի Պատգմ.ի ընտրութեան թեկ-
նածու գնելու համար Սերատարի կը մեկ-
նէր, Ս. Դ. Հնչ, գլխւպին մէջ «Օրուան
Ազգ. Իրատապ խնդիրներ» նիւթին վրայ
բանախօսեց 1.30 ժամու չափ: Բանա-
խօսութիւնը գիտական փաստերէ հնար
էր:

ՅԵՐԵԿՈՅԹ

Ամսոյս 3ին եչ. օր Դաշնակցութեան
պիտմբին մէջ կոմիտէին կողմէ ցերեկայթ
մը արուեցաւ, ուր բանախօսեցին Տիարք
Յ. Խարմանեան, Ս. Վանկեան և Ս. Տ.
Յակոբեան: Նուագները հաճելի էին:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ

Ամսոյս 2ին եչ. օր ցերեկին Ազգ.

Կեդր. Վարժարանին մէջ, Տիկին Ֆ. Ա.
թէշեանի առաջնորդութեամբ և ուսուց-
չուհիներու մասնակցութեամբ միասն կա-
նանց համար յաջողապէս ներկայացուած
է «Վարդանանք կամ Աւարայրի արժիւղ»
տրամբ ի նպատակ ազնկանց վարժարանի:
Կը գովենք իգական սեռի դէպի զարգա-
ցում ու գործունէութիւն ցոյց տուած
չարժումը:

Նոյն իրիկունը Ս. Դ. Հնչակեան թա-
տերախումբին կողմէ՝ Ս. Դ. Հնչ. գլխւ-
պին մէջ ներկայացուեցաւ վաղամեռիկ
բանաստեղծ Պ. Դուրեանի «Վարդ և
Շուշան» տառմբ: Դերակատարները ի-
րենց դերին խելակտն տէրն էին. մաս-
նաւորապէս Պր. Յովսէփ Եարտըմ, որ
սիրանարի՝ — Վարդի — դերը կը կատա-
րէր: Տառմէն վերջ՝ Պր. Եարտըմ՝ «Ա-
ղամին Անէծքը» արատանեց խիտա բը-
նական ու յազդիչ երևոյթով մը: Ժողու-
վորդը իր ներկայութեամբը պատուած
էր թատերական յանձնախումբը՝ սրանը
լեցնելով:

ՏԻՈՒՐ ՎԱԽՃԱՆ ՄԸ

Նոր տարւոյ առթիւ տեղւոյս Ազգ.
Ներսէսեան վարժարանի աշակերտութեան
կողմէ հանդէս մը տարբուեալ, որ ըստ
բաւականի յաջող անցած կարելի է հա-
մարել: Իբր հոգադարձու հանգէսին կա-
տենապետէր յայտնի հակայեղափոխական
ու նկարագրէ իսպառ զուրկ, աղայական
դասին մութ գործիքը եղող Զատիկեան
Յարութիւնը, որ հանդէսէն վերջը, ան-
կապ, իրարու հակասող փողոցային լեզ-
ւով մը քննադատեց նախորդ տարուան
կրթական գործի պատասխանատուները և

անպատկառ լեզուով մը վեր հանեց իրենց ներկայ տարուանգործունէութիւնը: Չատիկեանի ամբողջ էութիւնն ու հոգեբանութիւնը ճանկցող փողովրդեան բարկութիւնը զենիթը հասած էր, երբ Տիար Սարգիս Թունտեան բեռ ելնելով ճախճախեց Չատիկեանի ըսածները և մերկապարանոց ըրաւ անոր հոգեբանութիւնը: Չատիկեան ընկճուած թէև, բայց ուզեց պատասխանել, սակայն հանդիսականք Սոցկուրու:

(նստիւր վա՛ւ, անիրաւ ես, չեմք սեղեր լսել քեզի) խօսքերուն վրայ անամօթաբար նստաւ իր տեղը:

Կը դաւնէր որ այս նկարագիրն ունեցող անձերը՝ Սոցկուրուէ երիտասարդութիւնը հոգաբարձութեան նման վաւառիկ պաշտօնը մը վրայ կը պառնն դնու: Յաշարդին կը խոտտանամ տեղւոյն կըրթական, ազգային, քաղաքական և տնտեսական կեանքերու մասին լայնօրէն տեղեկագրել:

ԴԻՏՈՂ

بوش لافتر، قوری سوزلر اوچدی هوايه
طرفدارلقدن بافلمدی دعوايه
مجلس قیاندی، صوچی جزاسز قاندى
ایواه!.. قودور مش قور تدد سور بدد قاندى
مرأت

مجلس دیرنك اولمشدی دیرنكده تقسیم
كوزلر قیزمشدی آكلاشلمدی تقسیم.
رده رقاچ چوبان قوشه رق كلدیله
«سوری به قورت کیردی، یتیشك» دیدیلر

اربعه و نيكسار قصبه لری — قصبات مذكوره قائم مقام لری

یتك ختام یوانخی حرتله اوزلمكده در. قصبه به یقین اورمانلرده هكیم اوغلی و كورجیلر نامیله ایکی اشقیما چته لری قائم مقام عثمان بكك «اداره مصلحت» مدأ حر كئیدن بالاستفاده سنه لردنبروسر بستیجه اجرای شقاوت ایتكده درلر. ایکی آی اول قائم مقام مومی. الیه اربعه قائم مقامك نيكسار اشراقندن سلیمان اغا. نك خانه سنه كلدیكنی ایشیتیر ویانه كنذكر «أوحیلغه چوق مراقییم، ایرماقدن اوته سویلن آوینه كیده جكم اشقیالردن قورقویورم، رجا ایدرم!.. شو اشقیالری چاییق دردست ایدیكر» دیر. ایشته عثمان بكك اقتدار و حقیق شو سوزندن اكلاشیله ییلیر. اهالی قصبه وقرا اشقیالرك ظلمندن كندیسنه و كندیسی ایسه بشقه سنه اتجا ایدییه در. نيكسارده متعلین دخی بك چوقدر مستثنا اوله رق اهل ثر و تدن مقید زاده احمد رفعت افندی بلا تفریق جنس و مذهب مغدورینك حقوقی محافظه و اولاد وطنك تعلیم و تربیه سی ایچون مكتملر اچدیراسنه غیرت و زراعنك ترقیسی ایچون زراعه به هر خصوصه صدمه و انت ایتكده در. ایشته حسیات نجییه!.. مرأت

اربعه اهالیسی عمومیتله توتون زراعتیله مشغول بولمقده در. صوك اوچ سنه ظرفنده توتونك فیات بولمندن طولانی اهالی قصبه صاحب ثروت اولمشدر قصبه مذکور اهالیسی ملل مختلفه دن (اسلام، ارمنی، روم) متشکل اولوب یكدیكرلرینه دائما معاونتده بولمقده در میانه لرنده حکم فرما اولان اخوت و اشتلافه حقیقه غبطه ایدیلور قصبه مذکور اهالیسی اسماعل حق بك نامیله غایت فعال و مشروطیت پرور بر قائم مقامه مالکدر. قائم مقام مومی الیه بلا تفریق جنس و مذهب ارباب مصالحك ایشیه مشغول بو. انبور، حکم قانونی بالذات کندیسی اجرا خرسز و اشقیالری تعقیب و دردسته اهالینك استراحت و اسایشنه بذل وجود ایدیور. وطنمزده اسماعل حق بك کبی مقتدر و مشروطیت پرور قائم مقام و ما مودلر بولور ایسه ایشته او وقت وطنمز حقیقه اسکی عثمانلیلر وطن دنیلیمکه شایسته اولور. نيكسار اهالیسی مصارف و مدنیته جه بك کیر و قالمشدر. مسن، قولاغنده صاغر و حسیات وطن پروریدن ایکم قائم مقام عثمان بك حق تقاعدنی آده ایتك ارزوسيله متباقی بر یچق سنه لك مأمور

اللری اوزادان قبلری وحشیجه ایجتیمکدن بزه تبسم ایدن چهره لری مرحمتسزجه طوقات آتقدن نه خیرمز اوله جق . دیگر اسلحه مدافعه بی محو ایدن مذهبدن اکتساب اولنان بو سلاح ایله دهرلر یاشادق فقط دائما کری کیندک تدنی ایتدک .

ای عالم ادبیاتک مرشدلری غزته جیلز محرو بکله و انقد برادرلر دین امان و عزیز شریعات نامنه سزه رجا ایدر و یالواردم آرتق برطرفه براقک بو دهشت الفاضی . خلاق عوالم الیه دین قور فکز جناب بارینک سزه احسان ابتدکی خریستیان وطنه شلردن شمدی به یالکز صداقت و ایملک کوردیکز . کافیدر صرف ایدیلن فضاقت کندی کنیدیگری بولق ایچون طوریکز بر مدت نه خیر- یستیانلق ایتالیه ملک مشتراسیدر نه ده بتون خریستیانلر ایتالیانک عسکری درلر .

خریستیان وطنه شلریکز یورکری راحتلندرمفه غیرت ایدیکز خالص و علی جناب طور و حر کت کوستریکز آنلرک قبلری قاناده یکر اورده سزی سوه جک بر یاییکز عینی وقتده امین اولوکز و امن ایدیکز الله مذهبک کین و عداونه آلت اتخا ایدلمسنه اصلا مساعده ایتمز .

سو کولی دین قارداشلرم تحقیر ایتمکز بوفکرلریمی آنلر لفتک تام معناسینه حق و طوغریدرلر اطاعت ایدک و اجرا ایدیکز آنلرک احکامی ضرری یوق سزک عنیدیکرده مردود بریسی اولهیم فقط براقکز وطن راحت بولسون چون وطنک ترقیسی راحت سایه سنیده ممکن اولهیلر عکسی تقدیرده بزم بو شهرت مزله وطنک امراضنک آرتمه سنه و مقال هلاکه طوغری سوق اولندیغنه هیچ شبه یوقدر بر مدتیجده بکا دیکله یکر و بر آز وطن محبتی اراز ایدیکز . برازیده کافیدر وطن سفا لیده سود و نهجه مکده ایکی یله شاید راز عزت نفس و حسییاتکزی بوکسک طوته کر طمرنریکرده وطنرورلک حرارتیه طولی خواهش بولنه ایدی وطن چوقدن قورطولمش اولور ایدی عبدالحمیدک نه سندن الوداع قارداشلر .

اوبا ریسلرینک مجلسی

چوق کجمدی براقچ چوبانلر برکیجه	بوکسک یانلارده ، صولی اووالرده
دیگر سوریلره کیردیلر سربستجه	یاییلوردی قویون ، قوزی هر یانده
قومشو چوبانلر ایله غوغا ایتدیلر	آبریجه قیلقدن عبالی چوبانلر
آشروب قویونلری قیما ایتدیلر	قورمشلر ایدی سیاه قیلدن چادرلر
اوبا ریسلرینه اولدی شکایت	هر سوریه وارایدی آبریجه اوتلاق
مجلس قورلدی تام اوچ بچق ساعت...	ایرماقلر کنارنده یانه حق یتاق
افاده لر الیدی هر بر چوباندن	بک خوش ایدیلر چوبانلر کورنشدن
صوچیلر بولمیدی هیچ بر طرفدن	یاردمه حاضر بربرینه هر ایشده

خریستیانلرک عاقللری بو سوزلرک یالکیز جاهل متمصب چوجق فکری اسلام آغزلرنده صرف اولدیغنی پک ابو دینلر فقط آلره قارشو متأثر اولاملری و حسیاتلر قالمالری امکان خارجدندر شو حالده عقل سنیم صاحبی مدینتی مذهبی سیاسی یکدیگردن تقریق ایدیلن اسلاملرک موفعی غایت مشکلهشیور بز اول جاهلر کتلهسنک مذهبداشلری نه بوزله خریستیاز وطنداشلرک دیگر خریستیان دولترک یوزلرینه باقه جغز . آلرک یوزلرینه باقمچه آلردن حسن معادله معاوتت کوردکجه ایچیمزدن آغله یوب ، وای بزه ! وای بزه دیو سزله مقصدن باشقه نه حصه من قالیر عالم مدینتده ؟ بو عوام ریشلر و جهله باشلری بزه دکن یالکیز ومانداشلرک حتی دول اجنبیه میاننده بیله باشمزی یوقاری توته حق حال بر اقادیر .

بز مادی معنوی هر دورلی مضایقه مرده خریستیان ملتلرک خریستیان دولترک قابولری اله الیورز پاره ، علم ، صنعت ، مدینت احتیاجاتمزی آلر اکل ایدیورلر . سیاسی ، اقتصادی ، اجتماعی حیاتمک اکملی باینده آلره محتاجز .

دیگر طرفدن بزم اقرارمزه اشیکزار معمر برابر یاشادیغمز قارداش وطنداش دیو قوجانلشد یغمز عثمانی خریستیانلر او دولترک او ممالک اهلینک مذهبداشلریدرلر . عثمانی خریستیانلرده بزم کبی بو ملک وارثلریدرلر حال بویله ایکن آلره قارشو حسابمز و جاهل هجوملر ایله نیچون ایجتملی آلرک قبلریخی شو افعلمز آلرک وطنه بر خیاستدن نشات ایسه و بو داناشک و سبقلری الله بولنسه برأت قولای اولور بدرجهیه قدر .

فقط بو کون کوزومزله کوریورز فکرمزله فهم ایدیورز انلر بزم ایله مشترک المنافع وطنداشلر درلر صادق تبعه لر اولشلر و وطن اوغرونده نه پاره نه ده حیات اسیرکرلر . بوجهلرینه بدل بز قالفار عزت نفسلری آیاق آلتیه آلر راحتلری سلب ایدورز حقیقت حالده آلره بو تجاوز باشقلری طرفندن واقع اولسه بزم وظیفه ممز آلری مدافعه ایکن بز آلقچهلرینه و وطنه مضر بر صورتده یاشامغه تنزل ایدیورز آلر ایله . حیف صد حیف بزه .

نه قدر چاپوق اونوتدق وطنی و آلمک برینه بر کهنا خیال کچیردک دون حضورنده دیز اوزرینه صداقت عهد و پیمانلری تقدیم ایتدیکز وطنی عجبا نیچون خطرندن فراموش ایتدک . سایه سنده دهرلر دنبیری بر خوردار اولدیغمز طورانغی اوزرنده حدوشماری فی پایان سلسله ممز بسانمش اوزرنده شباتمزال کال صفا ایله کدراان ایدن معزز وطنی نیچون اونوتیق طرفقه کیدیورز . دهها دور وطنپرورلک حسیاتی ایله تحریک و تشویق ایتمکه سایع اولدیغمز خریستیان وطنداشلر ایله قارداش اولد یغمزی ایتاندرمغه چالشدیغمز صافدرون و پاک کنج تورکری عجبا نه سببله بوکون آلرک علمنده جهها ده دعوت ایدیورز . بوکون بر بدبختلغه اوغرا دیغمزده بزمه برابر اندیشهیه دوشن بزه معاوت

وطنپرورلکدن بر شئی اکلامدقلرینک اثباتی دکلمدر؟ تورک ملتی نامنه بویله بر اقراری نه حق ایله میدنه آنهیلورلر! حسیات ملیه ایله متحنی بولنان تورکر کمال نفرتله پروتستو ایده جکر بو چشیه جاهل دوشونکره قارشى .

مذهبی سلاح مقامنده استعمال مضردر و بزم خریستیان وطنداشلمزى بزه و اداره حکومته قارشى حرارت قلییه ایله انتسابدن منع ایدر دیک سوزمزی رد ایندیلر و بز وطنداش خریستیانلری قارداش بیلیرز دیو جواب ویردیلر . غریب حال باق غرابت نوده در اولاً جمع الفاظ استعمال ایدرلر هپسینه شمولی لسان قوللانیرلر صوکره کلام جمله فرقیله بر آئه چاپیشرلر فقط بونک ایله یارملی یورکر تداوی اولغازلر . عجیبا نه ظن ایدیلورلر ؟ افراد بشر لسانده موجود لغات و الفاظک معنا و قوتی ادراکدن عجزمی ظن ایدیلورلر بوقسه هر کسی یالدا تمق چوجقلر ایله حرکت قدر قو- لایمی دیو دوشونورلر قوه مدرکه بشر ایله او یون اوینایان ضررلی حیقار .

جهاد ! آوازه سی مذهب تهلیکده اولدینی ایچون اهل اسلامی محاربه یه دعوت دیمکدر . حال بوکه مذهب تهلیکه اولمدقدن باشقه مذهبه قارشى سوز سویلینده یوقدر هر نه قدر وقت بر مذ- هب مدینته ارشاد وظیفه سنده قصور ایتمزسه آکا قارشى سوز سویله نه من ذاتّه بر طرفدن خریستیا- نانغی و خاجی حکم ایدرلر دیگر طرفدن وطنمزه مسکون خریستیانلر بزم قارداشلمزدر دیو با- غریرلر . اوروپا خریستیانلرینه هر حقارتی آز کوررلر دیگر طرفدن آلبرک صالح میانجیلقه امید ایدرلر .

بو نه منطفسز طور ! ندر بو حراکاتک معاسی اولاً تعیب ایتک تحقیر ترضیله اوغراشماق صکره استمداد ایچون عینی ذواته مراجعتده بولماق بو نه جهالت بو ؟ بزم بیلیدیکمز یرینه حقارت ایدن آدن لطف دیله مز نه ده لطف استدعاسنده بولنان تحقیر موقعی طوته بیلیر .

بو حماقت بو جهالت متجسمی افعال و اقوال صرفیله ؟ بو تعصب سرکرده لکلریله می محافظه ایدیه جک بو دولت ؟ بو یوللرمی ایله تقویه ایدیه جک آنک اردوسی ؟ و عناصر مختلفه سی آراسنده تحکیم ایدیه جک وطنپرورلک روابطی بو افکار ایله می تهیه ایدیه جکدر ؟ حقسزلقه عدالت وحشله مدنیت فزاتق ادعاسی عجیبا ایمان ایتدیکمز الله قبول ایدرمی ؟ بو کون بو ادعایه ایتانق ایچون انسانک نام بر جاهل اولمی اقتضا ایدر .

خفیف بر روزگار کافیدر بر آغا جک قورومش و صارارمش یابراقلرینی بره دوکمه کو بو یابراقلر بر یوزنده بر مدت سوپروتنی کبی سوروندو کدن صکره ده بیوک بر ضربه ایله فصل منزبانى بولور- سه تام او یله جده بو نوع قوری و دوزمه سوزلر درخال آیاق آلتسه دوشر و آز بر وقت ایچون میدان ادبیاتی بر یاد تهید ایدرلر سه ده چوق کچمزدن سوپروتنو کوفه سنده راحتلرینه ابریشرلر .

امانت‌خانه

طشره منادیسی

نومرو ۸

کانون ثانی ۳۰ سنه ۱۳۲۷

برنجی سنه

۷ نومرودن مابعد و ختام

یکن ولی‌الدین بک

جمعیتدن استمداد ایدورلر دوشمن فیلسوفی بوسکورتنه چک یرده خاچی قوغلامق ایچون . ظن ایدرسن بزه قارشی محاربه ایدنلر وطنداشلرمن خریستیان عنصری اوله ایدی بوندن نه نتیجه چیقا جنی آشکاردردیمک اولورکه شاید بزه قارشی محاربه ایدنلر ماروق یا ایران حکومتلردن بریسی او . له ایدی قلعه و « استحقاکما تکز قبولرینی اوکلرنده آچه حق ایدک چونکه آنلر مذهبداشلرمن درلر اول وقتده خریستیان قارداشلرمن جهرملرینی بیقه چقلر ایدی مادام دوشمنلک ایدنلر اسلام » حکو متلر اوله چقلر ایدی .

دول متمدنه ملل مذوره میاننده جهاد فکری و سوزی مفقوددر آرتق بو فکره خدمت ایدن قافله تاریخ وسطی مزینخانه لرینه بر زبنت اولمقدن باشقه بر شیئه یارایه مزلر بو کون همذهب او- لدقلری ایچون سیاستده یکدیگرله مضاربیدن اجتناب خیالنه اوروپا محافل خدمت ایتیمور آرتق بونک تاریخده اک یاقین و اک دیری اثباتلری انکلترا بوژ و آمریقه اسپانیه محاربهری درلر بو ایکی محاربولرده خریستیان قوملر اراسنده وقوعبولدیلر و هر ایکسینده دخی مذهب مسئله سنندن دره قدر متأراولان بولندی وطنداشلرمنک خیالترینک و فکرلرینک مذهبی وطنپرورلر خلیاسیله اشغالنه اصلا راضی اوله مایز . بو نوع شارلاتانلق حماقلق و وحشتدن باشقه بر صفتله توصیف ایدیلهمز . حد داننده بو حراکاته وطنه قارشی خیانتدن باشقه نه معنا و بریله ییلر بو نوع افکاری تنقید و تعییب ایدیلرله متجاسرلر بزم فنا بر مقصدمن یوقدر سو قصد و تقهم نتیجه سی دئل صالت اسلام اهالی بی دین نامیله تشجیع و تشویق مقصدیله یولسانی استعمال ایدیورز جوانی و یردیله اهل اسلام بو صورته تاثر دها قولایدردیدیلر . فقط نیچون دوشمنیورلر عیسا بو سوزلر اسلاملرک

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ ՀԱՅԿԱԶՈՒՆ ԹԱՊԻՊԵԱՆ Ս.ՄԱՍԻՍ.

Ոսկի գուրուն եւ պրիճ նաեւ սեյխ-
շահ արհեստական ասամներ շինելու
մեթոդներն մեքոսը սորվիլ ուզող
բոլոր ասամնաբայժներու կը յայ-
տարարէ թէ ինք պատրաստ է այդ
մեքոսը սորվեցնել նպատաստուր
պայմաններով:

سیغورطه سی
سیمون فارقیان
آماسیه

آلیانسه عمر سیغورطه سی لانقاشه حریق
سیغورطه قومپانیه لرینک اجنتی در.
مناسب شرائطه هر نوع سیغه. نه بشتری
یاپار. آرزو ایدنلر بر دفعه تجربه ایتسولر
چیشیان ارتین اگا دکانک اتصلند باغانی
۵۰ (الی) یارهیه معدن کوری صاتیور.
هر کس فرصتدن استفاده ایتسون.

ՓՈՒԹԱՑԷՔ ԱՆՄԻՋԱՊԷՍ ԴԻՄԵԼ

ԿԱՐԱՊԵՏ ԱՅԿԱԶԵԱՆ
ԶԻՆԱՎԱՃԱՌՈՒՆՈՅԸ
ԲԱԼԸԳ. ԱՇԸ—ՍՍ.ՄՍՈՆ

Կր վաճառէ ամեն կարգի ու ամեն տե-
սակ փառհիւրէս 0 | 25 զեղջով: Թող դի-
մեն, բոլոր առիթէն օգտուիլ գիտցողները
վստահ ըլլալով թէ իրենց շահը նկատի պի-
տի առնուի միշտ: Օ՛րն փորձեցէք եւ հա-
մոզուեցէք:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Կեաւաբա.— Մ. Կ. Միմասեան.— Շնոր-
հակալութիւններ Ձեր գգացումներուն հա-
մար, Ձեր փափաքին համաձայն Յ օրինակ
կը դրկուի Ձեր հասցէին:

Քեօթահիա.— Հ. Զ. Ձեր թերթը ուղղակի
խմբագրութեանս կողմէ կը դրկուի: Մեր
ուղղութեան համապատասխան Ձեր գրու-
թիւններն սիրայօժար կը հիւրնկալուին:

Վիեննա.— Խմբ. Հանդէս-Ամսօրայի.—
Ձեր փափաքած թիւերն ուղարկեցինք նա-
խորդ սուրհանդակով:

Վան.— Մ. Շ.— Շնորհակալութիւններ:
Երկուքն սղ կը հրատարակուի: Շարունա-
կեցէք. Ձեր գրել խօսացած տեսութիւնը
փութացուցէք:

Վան.— Յ. Ա.— Շնորհակալութիւններ
առանձին գրութեաւ այս թիւ:

Տարսոն.— Գ. Պ.— Ձեր բարբր սա-
ցանք. շնորհակալութիւն, թերթերը կը շա-
րունակուին. նոր բաժանորդներու կ'սպա-
սենք:

Կ. Պոլիս.— Վ. Զ.— Գրեթէր ստացանք:
Տոմսերը դրկուեցաւ, առանձին կը գրուի:

Սամսոն.— Ն. Բ.— Երկար գրութիւն-
նիդ առի, այդ մասին կը գրուի: Ծանո-
ցումը կը տեսնէք: Յանկը դրկուեցաւ:

ՍՏԱՑՈՒՄԻ ԳԻՔ

1.— ԻՆՁ Է ՄԵՐ ԾՐԱԳԻՐԸ ԿԱՄ ԸՆ-
ԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆԸ.— Վ. Լիպնիխս Ա.
Մաս: Թարգմ. Վ. Զեքունցեանի. Հրատ.
«Կայծ»ի թիւ 2 Կ. Պոլիս, Սօցիալ-Դե-
մօկրատիային եական հիմունքները ու ըս-
կզբունքները բացատրող ժողովրդային հաս-
կնալի ու մաքուր լեզուով հայացուցուած
գնահատելի գործ մընք: Ամեն ազգային
անհատ ջանալու է ձեռք անցնել ու կարգալ
այդ մաքուր սկզբունքները:

Էջ 32 Դին 40 փրյ.

Դնել ուզողներ՝ կրնան խմբագրութենէն
ստանալ:



شرائط اشترا
بر سنه لکى بر مجيد
الى ايلانى يارم مجيد در

اماسيه

صاحب امتياز و
مدبر مسئولى
حايقازون طيبسيان

سر محررى مناس بيكچيان

ياخود

طشره مناديسى

سياسى فنى ادبى اقتصادى و اخلاقى غزته در
هر اون بش كونده بر نشر اولنور

نومرو ۸

۳۰ كانون ثانى ۱۳۲۷

برنجى سنا

محتويات

ولى الدين بك اقتدى
مرآت

۷ نومرو دن مابعد يکن ولى الدين بك
اوبا رئيسلرينك مجلسى

مطبعه مزده ترجمه ارمنيجه روجه فرانسزجه وانگليزجه ليسانلريله هر نوع اعلانات،
اوراق تجاريه، قارت ويزتله، مکتوب باشلري، کتابله، غزته لر و مطبوعات حائد سائر هر نوع
ايشار غایت تمیز و مزاق اوزره طبع اولنيور. مقصد يکانه من محترم مشتريلر مجزي بمنون
قلماق در. هوونانيان و يارديميان شرکاسى

Տպագրանքս մէջ Տանկերէն, Հայերէն, Յունարէն, Ֆրանսերէն, եւ Անգլի-
իերէն լեզուներով ամէն տեսակ Ազդեր, Վաճառականական քղբեր,
Բարս վրիպիւթեր, Նամակագրութիւններ, Գրքեր, Թերթեր եւ տպագրական
ուրիշ ամէն տեսակ գործեր խիստ մաքուր եւ նաեակաւոր կը տպագրուին:
Այսակ նախասանկնքս է գոն թողել յարգելի յաճախորդները:
ՅՈՎՆԱՆՅԱՆ ԵՒ ԵԱՐԴԵՄԻԱՆ

آماسيه ده

مطبعة هوونانيان و يارديميان